

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների գնման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ զՄ ԳՀԾՁԲ-20/10

ք. Գավառ

« 19 » սեպտեմբերի 2020թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղաի ղեկավար Ս.Խլղաթյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ո» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Բաղդասարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՄՐԱԿՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps

համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՉԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1064400 (մեկ միլիոն վաթսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:<sup>19</sup>

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxՕxԶ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Օ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Զ-ն մատուցված ծառայության քանակն է:<sup>21</sup>

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>22</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն վճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### 6. ԱՆՀԱՂԹԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

<sup>19</sup> Եթե Կատարողի կողմից գնացի են առաջարկել ներկայացվել է առանց ԱԱԸ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ենթադրյալ ԱԱԸ-ն» բառերը հանվում են:

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

#### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:<sup>23</sup>

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

<sup>23</sup> Պետական բյուջեի միջոցների հարմար պարտավորումները չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությամբ նշված պայմանագրից հանվում է:

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կան մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ Պեղարդունիքի մարզպետարան  
ՀՀ Պեղարդունիքի մարզ Բ. Գավառ, Կենտրոնական  
Հրապարակ 7



### Կ Ա Տ Ա Ր ՈՂ

«Մ-Քի-Ռ» ՍՊԸ  
Ք. Երևան, Մյուսուհիկյան 22/4  
«Ակբա կոնեյտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 220083335012000



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել այլ պայմաններ և չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

«Ղ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը                                   | չափման միավորը | ընդհանուր գինը/«Ղ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման                                     |  |
|--------------------------------------|---|---|----------------|------------------------|------------------|---|--|
|                                      |   |   |                |                        |                  | հասցեն  | ժամկետը**                                      |
| 1                                    | 50111130/1  | տեխնիկական բնութագիրը ներկայացված է՝ Հավելված N 1.1-ում | դրամ           | 1064400                | 1                | Ավտոմոբիլներ<br>ի տեխնիկական սպասարկման կայան | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020 |

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝

\*\* Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:


ՊԱՏԿԻՐԱՏՈՒ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան  
ՀՀ Գեղարքունիքի մարզ Բ.Գավառ, Կենտրոնական  
Հրապարակ 7  
ՀՀ ՀՀ  
Բաժնի կոդ՝ 008171678299  
ՀՀ Գեղարքունիքի մարզի  
Վերականգնողական  
Կենտրոնի ղեկավար



ԿԱՏԱՐՈՂ

«Ս-Բի-Ռ» ՍՊԸ  
Ք.Երևան, Սյաննիկյան 22/4  
«Ակբա կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ  
ՀՀ 220083335012000  
ՀՀ ՀՀ 08417829



| <b>Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց*</b> |   |  |
|--|---|--|
| <b>Ձեռքբերվող ծառայության նկարագիր</b>             |   |  |
| <b>Հ/Հ</b>   | <b>SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b> | <b>5-տեղանոց մարդատար ա/մ Nissan Terrano NTP3 SUV 2002թ. Toyota Camry 25 GAS 2014թ., Toyota Corolla 1,6 2012թ., Toyota Corolla 1,6 GAS 2014թ., Toyota land cruiser prado LC 150 2,7 2012թ.</b> |
| <b>1</b>   | <b>2</b>  | <b>3</b>   |
|  | <b>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</b>  |  |
| 1  | Շարժիչի հանում և տեղադրում  | 24000  |
| 2  | Շարժիչի վերանորոգում  | 24000  |
| 3  | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում  | 1800   |
| 4  | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում   | 5400   |
| 5  | Փակամի խցուկի փոխարինում  | 600  |
| 6  | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում  | 1800   |
| 7  | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում   | 1800   |
| 8  | Գրիչների փոխարինում SOHC  | 1800   |
| 9  | Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում   | 3600   |
| 10   | Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում   | 3600   |
| 11   | Ծնկածև լիսեռի հղկում  | 1800   |
| 12   | Մխոցային օդակների փոխարինում  | 6000   |
| 13   | Կարտերի հանում և տեղադրում  | 600  |
| 14   | Քիմիական լվացում 1 կտորի համար  | 2700   |
| 15   | Կալեկտորի հանում և տեղադրում  | 4800   |
| 16   | Թափանիվի հանում և տեղադրում   | 600  |
| 17   | Թափանիվի պատի հանում և տեղադրում  | 900  |
|  | <b>2. Դեկավարման, սմման և յուղման համակարգ</b>  |  |
| 18   | Յուղի և յուղի զտիչի փոխարինում  | 1200   |
| 19   | Ավտոմեքենայի հանգույցների յուղում   | 600  |
| 20   | Յուղի պոմպի փոխարինում  | 3000   |
| 21   | Դեկավարման բլոկի վերանորոգում   | 12000  |
| 22   | Օդի զտիչի փոխարինում  | 600  |
| 23   | Օդորակիչի զտիչի փոխարինում  | 600  |
| 24   | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում  | 2400   |
| 25   | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում   | 7200   |
| 26   | Բենզամղիչի փոխարինում   | 600  |
| 27   | Վառելիքի զտիչի փոխարինում   | 7800   |
| 28   | Վառելանյութի փողոակի հանում և տեղադրում   | 3000   |
| 29   | Վառելիքի բաքի հանում և տեղադրում  | 3000   |
|  | <b>3. Սառեցման և արտաժման համակարգ</b>  |  |

|    |   |       |
|----|---|-------|
| 30 | Ռադիատորի հանում և տեղադրում                  | 3000  |
| 31 | Ռադիատորի վերանորոգում                        | 21000 |
| 32 | Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում         | 15000 |
| 33 | Թերմոստատի փոխարինում                         | 3000  |
| 34 | Զրի պոմպի փոխարինում                          | 3000  |
| 35 | Ընդարձակող բաքի փոխարինում                    | 1800  |
| 36 | Խլարարի հանում և տեղադրում                    | 1800  |
| 37 | Խլարարի մերդիրի հանում և տեղադրում            | 600   |
| 38 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում          | 600   |
| 39 | Վառարանի շարժիչի հանում և տեղադրում           | 1800  |
| 40 | Վառարանի ծորակի հանում և տեղադրում            | 1200  |
| 41 | Հովացման հեղուկի փոխարինում                   | 1200  |
|    | <b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>                  |       |
| 42 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում           | 1800  |
| 43 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում              | 15000 |
| 44 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում                      | 15000 |
| 45 | ԱՓՏ-ի վերանորոգում                            | 30000 |
| 46 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում                  | 9000  |
|    | <b>7. Կախոց</b>                               |       |
| 47 | Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում        | 3000  |
| 48 | Անվակունդի հանում և տեղադրում                 | 1200  |
| 49 | Անվակունդի առանցքակալի փոխարինում             | 1200  |
| 50 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում       | 1200  |
| 51 | Չախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում      | 1200  |
| 52 | Չախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում | 1200  |
| 53 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում                 | 300   |
| 54 | Ջսպանակի հանում և տեղադրում                   | 2400  |
| 55 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում          | 3000  |
| 56 | Ներքևի լծակի հանում և տեղադրում               | 1200  |
| 57 | Ներքևի լծակի վռանների փոխարինում              | 1500  |
| 58 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում  | 1500  |
| 59 | Միջին ձգանի հանում և տեղադրում                | 1500  |
| 60 | Գնդե հողակապերի փոխարինում                    | 2100  |
| 61 | Ծայրականների հանում և տեղադրում               | 1500  |
| 62 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում         | 1500  |
| 63 | Հետևի կայունարարի վռանների փոխարինում         | 1500  |
| 64 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում          | 3000  |
| 65 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում    | 1800  |
| 66 | Անվաբացքի կարագավորում                        | 3000  |
| 67 | Ձողման աշխատանքներ 1 սմ համար                 | 900   |
|    | <b>8. Դեկային մեխանիզմ</b>                    |       |
| 68 | Դեկային կալունի հանում և տեղադրում            | 3000  |
| 69 | Դեկային կալունի վերանորոգում                  | 30000 |
| 70 | Դեկային ձողի հանում և տեղադրում               | 1800  |
| 71 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում      | 1800  |
| 72 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում       | 1200  |
| 73 | Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում    | 1200  |
|    | <b>9. Արգելակային համակարգ</b>                |       |
| 74 | Գլխ. գլանի հանում և տեղադրում                 | 1200  |
| 75 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում    | 1200  |
| 76 | Բանվ. գլանի հանում և տեղադրում                | 1200  |

|                                |  |        |
|--------------------------------|--|--------|
| 77                             | Արգելակային համակարգի օդահանում                            | 600    |
| 78                             | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում                         | 600    |
| 79                             | Չետևի սուպպորտի հանում և տեղադրում                         | 600    |
| 80                             | Արգելակային փողրակի փոխարինում                             | 1200   |
| 81                             | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում                    | 3000   |
| 82                             | Չետևի սկավառակային կոճղակների փոխարինում                   | 3000   |
| 83                             | Չետևի կոճղակների փոխարինում                                | 3000   |
| 84                             | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում                     | 3000   |
| 85                             | Չետևի արգելակային սկավառակի փոխարինում                     | 3000   |
| 86                             | Արգելակային սկավառակի հղկում                               | 1200   |
| 87                             | Արգելակային թմբուկի հղկում                                 | 1200   |
| 88                             | Ձեռքի արգելակի ճուլամի հանում և տեղադրում                  | 1200   |
| <b>10. Էլեկտրասարքավորում</b>  |  |        |
| 89                             | Էլեկտրասարքավորման վերանորոգում                            | 6000   |
| 90                             | Չափիչ սարքերի հանում և տեղադրում                           | 2400   |
| 91                             | Գեներատորի հանում և տեղադրում                              | 2400   |
| 92                             | Գեներատորի վերանորոգում                                    | 2400   |
| 93                             | Մեկնարկիչի հանում և տեղադրում                              | 2400   |
| 94                             | Մեկնարկիչի վերանորոգում                                    | 2400   |
| 95                             | Բռնկման կողպեքի հանում և տեղադրում                         | 1200   |
| 96                             | Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում                     | 1200   |
| 97                             | Ապակեամբարձիչի հանում և տեղադրում                          | 1200   |
| 98                             | Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում               | 1200   |
| 99                             | Ազդանշանային համակարգի տեղադրում                           | 3000   |
| 100                            | Վառոցքային լարերի հանում և տեղադրում                       | 1200   |
| 101                            | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում                      | 9000   |
| 102                            | Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում           | 3600   |
| 103                            | Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում        | 7200   |
| 104                            | Էլեկտրական տվիչների փոխարինում                             | 1200   |
| 105                            | Էլեկտրական անջատիչների փոխարինում                          | 600    |
| 106                            | Վառոցքի կոճի փոխարինում                                    | 3000   |
| 107                            | Վառոցքի մոմերի փոխարինում                                  | 3000   |
| 108                            | Կոնդիցիոների լիցքավորում                                   | 7200   |
| 109                            | Կոնդիցիոների վերանորոգում                                  | 7200   |
| <b>11. Այլ ծառայություններ</b> |  |        |
| 110                            | Ավտոմեքենայի թափքի հղկում և մերկում գին 1 քառ.դմ - ի համար | 9000   |
| 111                            | Ամիվի հանում և տեղադրում                                   | 600    |
| 112                            | Անվաղողի վերանորոգում                                      | 600    |
| 113                            | Անվաղողի քամիում և հավաքում                                | 600    |
| 114                            | Ամիվի հավասարակշռում                                       | 600    |
| 115                            | Ամիվի վալց   | 600    |
| 116                            | Նստարանի հանում և տեղադրում                                | 600    |
| 117                            | Նստարանի նորոգում  | 600    |
| 118                            | Ծածկոցի ճուլամի հանում և տեղադրում                         | 600    |
| 119                            | Ղիմապակու հանում և տեղադրում                               | 600    |
| 120                            | Դռան պաստառի հանում և տեղադրում                            | 600    |
| 121                            | CO-զոդման աշխատանքներ, <i>գին 1 սմ - ի համար</i>           | 600    |
| 122                            | Արգոնե-զոդման աշխատանքներ, <i>գին 1 սմ - ի համար</i>       | 600    |
| 123                            | Խառատային աշխատանքներ 1 կտորի համար                        | 600    |
| 124                            | Փականագործի աշխատանքներ 1 ժ, համար                         | 1200   |
| 125                            | Քարշարկի ծառայություն <i>գին 1կմ, համար</i>                | 600    |
| Ընդամենը ծառայություններ       |  | 440100 |



| SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քաայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները |                                     |       |
|---|-------------------------------------|-------|
| 1.Շարժիչ  |                                     |       |
| 1   | Շարժիչի բլոկ                        | 18000 |
| 2   | Շարժիչի գլխիկ                       | 18000 |
| 3   | Բարձիկ                              | 21000 |
| 4   | Շարժիչի գլխիկի միջադիր              | 9000  |
| 5   | Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ       | 6000  |
| 6   | Շարժիչի փական դուրս մղող            | 3600  |
| 7   | Շարժիչի փական ներս մղող             | 4200  |
| 8   | Շարժիչի փականի խցուկ                | 1800  |
| 9   | Ծնկածև լիսեռի խցուկ առջևի           | 3000  |
| 10  | Ծնկածև լիսեռի խցուկ հետևի           | 6000  |
| 11  | Ծնկածև լիսեռի արձատական ներդիրներ   | 21000 |
| 12  | Ծնկածև լիսեռի շարժաթևային ներդիրներ | 21000 |
| 13  | Մխոց                                | 3600  |
| 14  | Մխոցային օդակներ                    | 6000  |
| 15  | Շղթա                                | 3000  |
| 16  | Հիդրոձգան                           | 3000  |
| 17  | Հրիչ                                | 3000  |
| 18  | Հիդրոհրիչ                           | 1800  |
| 19  | Հանգստարար                          | 1200  |
| 20  | Թափանիվ                             | 1400  |
| 21  | խցուկ բաշխիչ լիսեռի                 | 1400  |
| 22  | Կարտերի միջադիր                     | 1200  |
| 23  | Միջադիր                             | 1200  |
| 2.Դեկավարման, սնման և յուղման համակարգ  |                                     |       |
| 24  | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր   | 2400  |
| 25  | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր       | 3600  |
| 26  | Յուղի գտիչ                          | 5100  |
| 27  | Յուղի պոմպ                          | 12000 |
| 28  | Յուղի ծորակ                         | 1200  |
| 29  | Վառոցքի մոմ                         | 3900  |
| 30  | Բենզոլաբ                            | 3000  |
| 31  | Ինժեկտորի ֆորսունկա                 | 3000  |
| 32  | Վառելանյութի մղիչ էլեկտրական        | 15000 |
| 33  | Վառելանյութի մղիչ մեխանիկական       | 15000 |
| 34  | Վառելանյութի գտիչ                   | 9000  |
| 35  | Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման     | 1200  |
| 36  | Վառելանյութի փողոակ                 | 1200  |
| 37  | Օդի գտիչ                            | 1800  |
| 38  | Օդորակիչի գտիչ                      | 1800  |
| 39  | Ջերմաստիճանային տվիչ                | 1800  |
| 40  | Յուղի տվիչ                          | 1800  |
| 41  | Բաշխիչ լիսեռի տվիչ                  | 1800  |
| 42  | Ծնկածև լիսեռի տվիչ                  | 1200  |
| 43  | Մաքրող հեղուկ ABRO կամ համարժեք     | 1200  |
| 44  | Օդի ծախսի տվիչ                      | 1200  |
| 45  | Օդի ծախսի տվիչի ռետինե խողովակ      | 1200  |
| 46  | Արագաչափի տվիչ                      | 1200  |
| 47  | Հովիարի տվիչ                        | 1200  |

|  |                                    |        |      |
|--|------------------------------------|--------|------|
| 48                                     | Ջրի տվիչ                           | 1200   |      |
| 49                                     | Բենզոլրաքի տվիչ                    | 1200   |      |
| 50                                     | Մարման ընթացքի կարգավորիչ          | 1200   |      |
| 51                                     | Մարման ընթացքի տվիչ                | 1200   |      |
| 52                                     | Ղեկավարման համակարգիչ              | 1200   |      |
| 53                                     | Պարապ ընթացքի տվիչ                 | 1200   |      |
| 54                                     | Դրոսելային փականի տվիչ             | 1200   |      |
| 55                                     | Հետընթացի տվիչ                     | 1200   |      |
| 56                                     | Թթվածնի տվիչ                       | 1200   |      |
| <b>3. Սառեցման և արտածման համակարգ</b> |                                    |        |      |
| 57                                     | Ռադիատոր                           | 36000  |      |
| 58                                     | Ընդարձակող բաք                     | 3600   |      |
| 59                                     | Ընդարձակող բաքի փական              | 600    |      |
| 60                                     | Ռադիատորի փողրակ                   | 600    |      |
| 61                                     | Թերմոստատ                          | 9000   |      |
| 62                                     | Ջրի պոմպ                           | 21000  |      |
| 63                                     | Սառեցման հեղուկ                    | 1 լիտր | 1200 |
| 64                                     | Փոկ                                | 9000   |      |
| 65                                     | Խլարարի ներդիր                     | 300    |      |
| 66                                     | Խլարարի կախոց                      | 300    |      |
| 67                                     | Անուր (համուտ)                     | 600    |      |
| 68                                     | Խլարար                             | 18000  |      |
| 69                                     | Վառարանի ռադիատոր                  | 24000  |      |
| <b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>           |                                    |        |      |
| 70                                     | ԱՓՏ-ի գտիչ                         | 9000   |      |
| 71                                     | ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու       | 27000  |      |
| 72                                     | ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ        | 27000  |      |
| 73                                     | Տրանսմիսսիոն յուղ,                 | 1 լիտր | 3000 |
| 74                                     | ԱՓՏ յուղ,                          | 1 լիտր | 4500 |
| 76                                     | Հերմետիկ                           | 1200   |      |
| <b>7. Կախոց</b>                        |                                    |        |      |
| 77                                     | Չախ կամ աջ հողակապ                 | 24000  |      |
| 78                                     | Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց     | 30000  |      |
| 79                                     | Անվակունդ                          | 18000  |      |
| 80                                     | Անվակունդի խցուկ                   | 900    |      |
| 81                                     | Անվակունդի ներքին առանցքակալ       | 15000  |      |
| 82                                     | Հետևի անվակունդի ներքին առանցքակալ | 15000  |      |
| 83                                     | Չախ կամ աջ հողակապի խցուկ          | 3600   |      |
| 84                                     | Հարվածամեղմիչի թասակ               | 9000   |      |
| 85                                     | Առջևի ցնցամեղմիչ                   | 30000  |      |
| 86                                     | Ներքևի լծակի վռան                  | 6000   |      |
| 87                                     | Վերևի լծակի վռան                   | 7200   |      |
| 88                                     | Գնդե հողակապ                       | 10800  |      |
| 89                                     | Առջևի կայունարարի վռան             | 3000   |      |
| 90                                     | Հետևի կայունարարի վռան             | 3600   |      |
| 91                                     | Կայունարարի կանգնակ                | 9000   |      |
| 92                                     | Հետևի ցնցամեղմիչ                   | 33600  |      |
| 93                                     | Հետևի մետաղածողի (շտանգա) վռան     | 5280   |      |
| 94                                     | Աջ կամ ձախ ձգան                    | 7200   |      |
| 95                                     | Ծայրակալ                           | 7200   |      |
| 96                                     | Անվահեծ                            | 6800   |      |

| 8. Ղեկային մեխանիզմ          |  |                |
|------------------------------|--|----------------|
| 97                           | Ղեկային կալուն   | 27120          |
| 98                           | Ղեկային կալունի խաչուկ   | 1200           |
| 99                           | Հիդրոուժեղարար   | 21600          |
| 100                          | Ղեկային ծողի ծայրակալ  | 3000           |
| 101                          | Հիդրոուժեղարարի յուղ, <i>1 լիտր</i>                              | 3000           |
| 9. Արգելակային համակարգ      |  |                |
| 102                          | Գլխ. գլան  | 9000           |
| 103                          | Վակուումային ուժեղարար   | 15000          |
| 104                          | Արգելակային փողրակ   | 1200           |
| 105                          | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ                            | 21000          |
| 106                          | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ                           | 21000          |
| 107                          | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ                             | 21000          |
| 108                          | Առջևի արգելակային սկավառակ                                       | 21000          |
| 109                          | Հետևի արգելակային սկավառակ                                       | 21000          |
| 110                          | Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ կամ համարժեք                 | 1200           |
| 111                          | Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ կամ համարժեք                 | 1200           |
| 112                          | Չեռքի արգելակի ճոպան   | 1200           |
| 113                          | Չեռքի արգելակի լծակ  | 1200           |
| 10. Էլեկտրասարքավորում       |  |                |
| 114                          | Գեներատոր  | 30000          |
| 115                          | Գեներատորի դիողային կամրջակ                                      | 12600          |
| 116                          | Գեներատորի ռելե  | 11400          |
| 117                          | Գեներատորի առանցքակալ  | 3000           |
| 118                          | Գեներատորի խարիսխ  | 11400          |
| 119                          | Գեներատորի փաթույթ   | 3000           |
| 120                          | Ստարտեր  | 30000          |
| 121                          | Ստարտերի ռելե  | 2400           |
| 122                          | Ստարտերի ածուխ   | 7200           |
| 123                          | Բենդեքս  | 1800           |
| 124                          | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)                                       | 1800           |
| 125                          | Ստարտերի խարիսխ  | 1800           |
| 126                          | Առջևի լապտեր   | 1200           |
| 127                          | Հետևի լապտեր   | 1200           |
| 128                          | Լամպ   | 3360           |
| 129                          | Թարթիչի միացման լծակ   | 1500           |
| 130                          | Էլեկտրական տվիչ  | 1800           |
| 131                          | Էլեկտրական չափիչ սարք  | 1800           |
| 132                          | Բռնկման կողպեք   | 4800           |
| 133                          | Վառոցքային լարերի խուրց  | 9000           |
| 134                          | Վառոցքի մոմի ծայրակալ  | 2100           |
| 135                          | Վառոցքի կոճ  | 15000          |
| 136                          | Ազդանշան   | 1800           |
| 137                          | Ապակեվազիչ   | 1800           |
| 138                          | Ապակեմաքրիչի շարժիչ  | 6000           |
| 139                          | Դռների կենտրոնական փական   | 3000           |
| 140                          | Էլեկտրասամբարձիչ   | 2940           |
| 141                          | Էլեկտրասամբարձիչի շարժիչ   | 3000           |
| 142                          | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր <i>զին 1լ/մ վերամորոգման համար</i> | 3600           |
| <b>Ընդամենը պահեստամասեր</b> |  | <b>1083900</b> |
| <b>Ընդամենը</b>              |  | <b>1524000</b> |

|  |
|--|
| <p>Բոլոր վանդակները պետք է լրացվեն, հակառակ պարագայում մասնակցի հայտը կմերժվի</p>  |
| <p align="center"><b>*Պարտադիր պայմաններ</b></p>   |
| <p>Կատարող պետք է նախապես զննի տրանսպորտային միջոցը, որի վերաբերյալ Պատվիրատուի կողմից նշվող էլ. փոստի հասցեին պետք է ուղարկվի գրավոր հաստատված զննության արդյունքները՝ նշելով մատուցվելիք ծառայությունների տեսակը (ներք), չափման միավորը (ներք), քանակը (ներք) և ընդհանուր գումարը (ներք)</p> |
| <p>Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 2 ամբարձիչներով (домкрат)՝ առնվազն 2,5 տոննա բարձրացնելու կարողությամբ:</p>  |
| <p>Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե Պատվիրատուի համաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:</p>  |
| <p>Սպասարկման ենթակա ավտոմեքենաները, որոնց միաժամանակյա քանակը կարող է լինել մինչև 4, պետք է պահպանվեն փակ, տանիքածածկ, հսկվող տարածքում:</p>  |
| <p>Ավտոմեքենաների սպասարկումը, որոնց քանակը միաժամանակ կարող է լինել մինչև 4, պետք է սպասարկվեն առանձին դիտահորերով կամ ամբարձիչներով մեկ վայրում:</p>   |
| <p align="center"><b>Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման կայաններից պահանջվող տեխնիկականազմակերպչական պայմաններ</b></p>  |
| <p>Տեխ. սպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա ստորև բերված նվազագույն հնարավորությունները՝ որակով և ժամանակին տեխնիկական սպասարկում կատարելու համար</p>   |
| <p>փակ և պահպանվող տարածք նվազագույնը 4 ավտոմեքենաների համար, տեսահսկման համակարգ, պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողության իրականացում:</p>  |
| <p>տաքացվող բոքսեր 2 և ավելի ամբարձիչների վրա միաժամանակ աշխատելու հնարավորությամբ</p>   |
| <p>լվացման կետ, ինչպես ավտոմոբիլի, այնպես էլ մեքենա-մասերի համար:</p>  |
| <p>դիտավոս</p>   |
| <p>դեֆորմացված թափքի ուղղման ստենդ, զոդման համար անհրաժեշտ սարքավորումներ, այդ թվում նաև ալյումինի և չուգունի, ներկման, չորացման և հարդարման ժամանակակից միջոցներ:</p>   |
| <p>էվակուատոր 2.5տ նվազագույն բեռնատարողության, որը կանչը ստանալուց հետո 100 րոպեի ընթացքում կարող է դուրս գալ տեխ.սպասարկման կայանից դեպի խափանման (վթարի) վայր՝ &lt;&lt;:</p>  |
| <p>կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ունենա ծրագրեր և տեխնիկական գրականություն՝ ախտորոշում կատարելու համար:</p>  |
| <p>ունենա մեքենայում առկա էլեկտրական բնույթի խափանումները վեիացնելու հնարավորություն՝</p>  |
| <p>կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի, ընթացքային մասի և թափքի առանձին սարքավորումների, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ</p>   |
| <p>վերը նշված աշխատանքները կատարելու համար ունենա արհեստավարժ մասնագետներ, ոչ պակաս 3 տարվա աշխատանքային փորձով</p>  |
| <p>Դողերի քանդման հավաքման և հավասարակշռման ստենդ, անվաբացքի կարգավորման ստենդ, ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ, մեղմիչների ստուգման ստենդ, լուսարձակների կարգավորման ստենդ, արգելակների ստուգման ստենդ:</p>   |
| <p>աշխատանքների վրա կատարվի ինժեներական վերահսկողություն :</p>   |
| <p>Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ սպասարկման արագությունն ապահովելու նպատակով:</p>  |
| <p>Պահեստամասերը պետք է լինեն նոր և բարձրորակ, գործարանային փաթեթավորմամբ</p>  |

*Ծանոթություն` Վերոջ նշված պահանջները Պատվիրատուի կողմից ենթակա են տեղում ստուգման մրցույթն ավարտվելուց հետո` հայտ ներկայացրած իրավաբանական անձի ներկայացուցչի մասնակցությամբ*

*Նշված պահանջներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում ծառայությունը չի ընդունվի:*

*Երաշխիքներ*

*Ծառայությունների, պահեստամասերի և ջեռիմե դեռալների համար նվազագույնը 6 ամիս*

*Պահանջվող մասնագետներ  
նվազագույնը 1 ավտոմոբիլայինագործ  
նվազագույնը 1 շարժիչագործ  
նվազագույնը 1 ավտոէլեկտրիկ  
նվազագույնը 1 անվարացքի ուղղման մասնագետ*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

|                                      |   | Ծառայության                                 |   |         |        |        |        |        |        |         |           |           |          |           |          |         |         |
|--------------------------------------|---|---|---|---------|--------|--------|--------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|----------|---------|---------|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ՊՄՈ հասակարգման (CPV) | անվանումը                                   | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** |         |        |        |        |        |        |         |           |           |          |           |          |         |         |
|                                      |   |   | հունվար   | փետրվար | մարտ   | ապրիլ  | մայիս  | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |         |         |
| 1                                    | 50111130/1  | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ |   | 106400  | 106400 | 372500 | 372500 | 372500 | 372500 | 638600  | 638600    | 638600    | 1064400  | 1064400   | 1064400  | 1064400 | 1064400 |

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

\*\* հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Ձեռարքունիքի մարզպետարան  
ՀՀ Ձեռարքունիքի մարզ Ք.Գավառ, Կենտրոնական  
Հրապարակ 7  
ՀՎՀՀ՝ 08404767

Բանկ՝ ՀՀ ֆինանսական պալատ

Հ/Հ՝ 900004078299

Գլխավոր քահանայի տնային

ստորագրող



ԿԱՏԱՐՈՂ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ

Ք.Երևան, Մյասնիկյան 22/4

«Ակբա կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ


Հ/Հ 220083335012000

ՀՎՀՀ 08417829

Տնօրեն

Վ.Բաղդասարյան

(Արտագրող)



Հավելված 3  
«19» փետրվարի 2020 թ. կնքված  
N ՀՀ զՄ ՁՇՁԲ-20/10 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐՎ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՄՆԱՆ**

«    »    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագրի/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների |   |  |         |  |         |  |
|---|----------------------------|---|--|---------|--|---------|--|
|   | անվանումը                  | տեխնիկական քննության համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը                            |         | կատարման ժամկետը                               |         | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|   |                            |   | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի |  |
|   |                            |   |  |         |  |         |  |
|   |                            |   |  |         |  |         |  |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

ԱԿՏ N  
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը  
 (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը  
 զնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
 նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության |                |                     |
|-------------|----------------|---------------------|
| անվանումը   | չափման միավորը | քանակը<br>(լիստագի) |
|             |                |                     |
|             |                |                     |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

### ԿՈՂՄԵՐԸ

#### Հանձնեց

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
ստորագրություն

#### Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
ստորագրություն